

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112959005 որոշումն անփոփոխ թողնելու, իսկ թիվ 2112959009 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<<11>> 08 2021թ. 7-13- 12100

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արայիկ Հայրապետյանի ներկայացուցիչ՝ Վարդուհի Վարդանյանի ՄԴ/61892-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Քաղաքացի Արայիկ Հայրապետյանի ներկայացուցիչ՝ **Վարդուհի Վարդանյանը (ծանուցման հասցե՝ քաղաք Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Յան Ռայնիսի փողոց, 3 շենք, 42 բնակարան)** դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112959005, 2112959009 և թիվ 2112886286, 2112886288 որոշումներին՝ նշելով, որ փոստային ծառայության կողմից ստացել է ճանապարհային ոստիկանության տեխնիկական միջոցներով հայտնաբերված իրավախախտման չորս նմանատիպ որոշումներ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի խնդրանքը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

Ճանապարհային ոստիկանության թիվ 2112959005, 2112959009 որոշումների հիմքերում դրված տեսանյութերը փաստում են, <<MERCEDES-BENZ>> մակնիշի 88QQ333 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը մուտք է գործել 3.1 <<Մուտքն արգելվում է>> ճանապարհային նշանով կահավորված փողոց: Նշված իրավախախտումն արձանագրվել է 13.06.2021թ. ժամը 13:33-ին Երևան քաղաքի Թամանյան-Իսահակյան փողոցների խաչմերուկի հատվածում:

Այսպիսով, վարչական վարույթի ընթացքում հիմնավորվել է, որ նույն իրավախախտման համար կայացվել է երկու որոշում, հետևաբար թիվ 2112959009 որոշումը տեխնիկական վրիպակի արդյունք է և ենթակա է բեկանման:

Ինչ վերաբերվում է Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 18.06.2021թ. թիվ 2112886286, 2112886288 որոշումներին, ապա հիմքի և առարկայի վերաբերյալ գոյություն ունի Ճանապարհային ոստիկանության կողմից ընդունված և ուժի մեջ մտած վարչական ակտ՝ Վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112886288 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու իսկ Վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112886286 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին 08.07.2021թ. թիվ 7-13-10685 որոշումը, ուստի դիմումը թիվ 2112886286, 2112886288 որոշումների մասով վերանայման ենթակա չէ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112959009 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112959005 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ դրան վերաբերող մասով, առանց բավարարման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Վարդուիի Վարդանյանին:

